ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

Գործնական խորհուրդներ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, ՈՎՔԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՆ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Շարժունակության խանգարումներ ունեցող երեխաները, ինչպես բոլորը, ԿԱՐՈՂ ԵՆ ՍՈՎՈՐԵԼ, իսկ դասավանդել նրանց՝ նշանակում է **օգնել նրանց հասնել իրենց ամենամեծ ներուժին:**
Շնորհակալություն Ձեզ այս մեծ մարտահրավերն ընդունելու պատրաստակամության համար:

1. ԴԱՍԱՐԱՆ

Համոզվեք, որ դասարանի բոլոր մասերում կա բավարար հասանելիություն անվասայլակով տեղաշարժվող երեխայի համար:
Համոզվեք, որ դասասենյակն ազատ է խոչընդոտներից և հասանելի է շարժունակության խանգարումներ ունեցող սովորողի տեղաշարժման համար (անվասայլակով, քայլակով, հենակով):
Ազատ պահեք նստարանների միջև եղած տարածությունները:
Եթե դասարանը անհասանելի է կամ անհարմար տեղաշարժվելու համար, ապա այլընտրանքային դասարան գտնելը տեղին կլինի:

2. ԽՈՍԵՔ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ՆՐԱ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Լսողության խանգարումներ ունեցող շատ երեխաներ կարողանում են կարդալ շրթունքներից: Նրանք հասկանում են խոսքը՝ դիտարկելով խոսողի շրթունքների շարժումները, դեմքի արտահայտությունները և ժեստերը: Խոսելիս միշտ դեմքով կանգնեք դեպի դասարանը, կրեք վառ գույնի շրթներկ, խոսեք դանդաղ և հստակ՝ շեշտադրելով բառերի վերջավորությունները:

3. ԿԵՆՏՐՈՆԱՑԵՔ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ ՄԵՋ ՄՏԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ

Օգնեք երեխային առաջադրանքը կատարելու համար օգտագործել խնդիրների լուծման իր կարողությունները և մտածելու հմտությունները:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP

Շարժունակության խանգարումներ ունեցող սովորողները հաճախ ինտելեկտուալ առումով և իրենց մտավոր ունակություններով չեն տարբերվում իրենց հասակակիցներից, իսկ կրթության մեջ նրանց հաջող ներառումը իրականացնելու համար անհրաժեշտ կլինեն միջավայրային հարմարեցումներ:

4. ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ԱՁԱԿՑՈՂ ՍԱՐՔԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Նախապես սովորողի ծնողին կամ հատուկ մանկավարժին տրամադրեք բառերի և տերմինների այն ցանկը, որոնք նա դեռ չի լսել և որոնց հետ նա պետք է ծանոթանա հաջորդ դասի ընթացքում: Անծանոթ բառերը ավելի վաղ ներկայացնելով սովորողին՝ Դուք կարող եք նվազագույնի հասցնել այդ բառերը ընկալելու նրա դժվարությունը: Հակառակ պարագայում նոր նյութ բացատրելիս նոր բառերը ուղեկցեք սովորողին ծանոթ հոմանիշներով կամ նկարներով:

5. ՀԻՇԵՔ՝ ԱՆՎԱՍԱՅԼԱԿԸ ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՄԻ ՄԱՍՆ Է

Մի կախվեք կամ մի հենվեք անվասայլակին, քանի որ դա նման է սովորողից կախվելուն կամ սովորողի վրա հենվելուն: Դա տեղին չէ, եթե դուք նրա մտերիմը կամ հարազատը չեք: Երբ երևում է, որ օգնության կարիք կա, հարցրեք՝ կարո՞ղ եմ օգնել: Սովորողների մեծամասնությունը անհրաժեշտության դեպքում օգնություն կխնդրի: Նրբանկատորեն ընդունեք «Ո՛չ, շնորհակալություն:» բառերը:

6. ՏՐԱՄԱԴՐԵՔ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԺԱՄԱՆԱԿ

Փորձեք հնարավորինս շատ օգտագործել նկարներ, գրաֆիկական պատկերներ և տեքստային նշումներ: Նոր նյութ բացատրելիս հնարավորինս շատ օգտագործեք գրատախտակ և դիդակտիկ պարագաներ: Դասարանին տրվող առաջադրանքները ներկայացրեք գրավոր տեսքով, իսկ բանավոր տեղեկատվությունը համալրեք նկարներով, գծապատկերներով, սխեմաներով: Ուսումնական նյութն ամրապնդելու նպատակով կարող եք կազմակերպել տեսաֆիլմի դիտում:

7. ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Սա աշխատանք է միայն նվիրյալների համար: Մենք շնորհակալություն ենք հայտնում՝ Ձեր աջակցության և լրացուցիչ աշխատանքի համար:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: